ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական
խորհրդի 24/06/2020թ. թիվ
143 նիստում

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1.1. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի հետազոտության և զարգացման գործընթացների պլանավորումը, խթանումը, իրականացումը, կազմակերպումը և կատարելագործումը, ինչպես նաև այդ գործընթացների արդյունքների վավերացումը և տարածումը տեղի են ունենում համաձայն ԳԿՄԿ ռազմավարական ծրագրի, հետազոտության ռազմավարության չափանիշների, կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի՝ կենտրոնի ռազմավարությանը համահունչ, համապատասխան գիտական գործունեության նկատմամբ ՀՀ ԲՈՀ-ի, ազգային և միջազգային այլ պահանջների և ԳԿՄԿ կնքած միջազգային պայմանագրերի:

1.2. ԳԿՄԿ հետազոտական աշխատաքների արդյունքների վավերացման մեխամիզմերը մշակվում և կիրարկվում են ԳԿՄԿ հետազոտության և զարգացման գործընթացների իրականացման լավագույն փորձի, ինչպես նաև ակադեմիական հետազոտական փոխճանաչման ազգային և միջազգային չափանիշների տեղայնացման արդյունքում:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ԳԿՄԿ-ի մագիստրոսական, ասպիրանտական և հայցորդական կրթության ընթացքում իրականացվող հետազոտությունների արդյունքները վավերացվում են մագիստրսական ու թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունների, գիտական հոդվածների, մենագրությունների, մեթոդական ուղեցույցների, ցուցումների, ձեռնարկների, զեկույցների հրատարակման, հանրայնացման, էլէկտրոնային շտեմարաններում զետեղման,աշխատաշուկայում վերջիններիս արդյունքների կիրարկման մեխանիզմներով:

2.2 ԳԿՄԿ-ում իրականացվող հետազոտությունների արդյունքները վավերացվում են միջազգային դրամաշնորհային կազմակերպությունների կողմից ներկայացվող մրցույթների արդյունքում ծրագրերին մասնակից լինելու, վերջիններիս շրջանակներում հետազոտություններ նախաձեռնելու և իրականացնելու, վերջնարդյունքները ներկայացնելու ու ծրագիրն ավարտին հասցնելու մեխանիզմներով:

2.3. ԳԿՄԿ-ում իրականացվող հետազոտությունների արդյունքները վավերացվում են ներհանրապետական ու միջազգային գիտական համաժողովներում ու

ֆորումներում ԳԿՄԿ-ում իրականացված հետազոտությունների վերաբերյալ հաղորդումներ, պրեզենտացիաներ ներկայացնելու մեխանիզմով:

2.4. ԳԿՄԿ-ում իրականացվող հետազոտությունների արդյունքները վավերացվում են գիտական խորհրդի կողմից երաշխավորված, հրապարակման ենթակա լինելու փաստը արձանագրած պարբերականի, մենագրությունների ու ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրվածության մեխանիզմով:

2.5. ԳԿՄԿ-ում իրականացվող հետազոտությունների արդյունքները վավերացվում են աշխատաշուկայում արդյուավետ կիրառելիությամբ ու մասնագիտական տարբեր ոլորտներում գիտական համագործակցության շրջանակի ընդլայնմամբ:

2.6. ԳԿՄԿ-ում իրականացվող հետազոտությունների արդյունքները վավերացվում են ակադեմիական ազնվության ու թափանցիկության, գրագողության կանխարգելման ընթացակարգերի կիրառման մեխանիզմով:

2.7.ԳԿՄԿ-ում իրականացվող հետազոտությունների արդյունքները վավերացվում են պրֆեսորադասախոսական համակազմի հաշվետվողականության համակարգի կիրառմաբ:

2.8. ԳԿՄԿ-ում իրականացվող հետազոտությունների արդյունքները քննարկվում են գործատուի հետ համատեղ: Վերջինիս կողմից ներկայացվում են հետազոտության վերջնարդյունքները, վավերացվում են՝ երաշխավորելով հանձնաժաղովի որոշմամբ և տրվում հետազոտության արդյունքների ներդրման տեղեկանք:

2.9. ԳԿՄԿ-ում իրականացվող հետազոտությունների արդյունքները վավերացվում են գործատուներից գիտահետազոտական աշխատանքների պատվեր ստանալու և դրանց արդյունքները վաճառահանելու մեխանիզմով: